

Գրիպի պատվաստանյութ (կենդանի, քթի մեջ փչվող). Ինչ է հարկավոր իմանալ

Many Vaccine Information Statements are available in Spanish and other languages. See www.immunize.org/vis

Պատվաստներին վերաբերող շատ տեղեկատվական թերթիկներ մատչելի են իսպաներեն և այլ լեզուներով: Տե՛ս www.immunize.org/vis

1 Ինչո՞ւ պատվաստվել:

Գրիպի պատվաստանյութը կարող է կանխել գրիպը: Գրիպը վարակիչ հիվանդություն է, որն ամեն տարի տարածվում է Միացյալ Նահանգներում սովորաբար հոկտեմբեր-մայիս ամիսներին: Ցանկացած մարդ կարող է վարակվել գրիպով, բայց որոշ մարդկանց համար այն առավել վտանգավոր է: Նորածինները և փոքր երեխաները, 65 տարեկան և ավելի տարեց անձինք, հղի կանայք և որոշակի առողջական խնդիրներ կամ թույլ իմունային համակարգ ունեցողները գրիպի բարդությունների ամենամեծ վտանգի տակ են:

Թոքաբորբը, բրոնխաբորբը, սինուսների և ականջների վարակները գրիպին առնչվող բարդությունների օրինակներ են: Եթե առողջական խնդիր ունեք, օրինակ՝ սրտի հիվանդություն, քաղցկեղ կամ դիաբետ, ապա գրիպը կարող է այն վատթարացնել:

Գրիպը կարող է առաջացնել տենդ և դող, կոկորդացավ, մկանների ցավեր, հոգնածություն, հազ, գլխացավ, ինչպես նաև քթից հոսքի կամ քթի փակվելու պատճառ դառնալ: Որոշ մարդիկ կարող են փսխում կամ փորլուծություն ունենալ, թեև սա ավելի հաճախ հանդիպում է երեխաների, քան չափահասների մոտ:

Ամեն տարի Միացյալ Նահանգներում հազարավոր մարդիկ մահանում են գրիպից, և շատերը հոսպիտալացվում են: Գրիպի պատվաստանյութը կանխում է միլիոնավոր հիվանդություններ, ինչպես նաև ամեն տարի գրիպի հետ կապված բժշկներին այցելությունները:

2 Գրիպի թուլացված, կենդանի պատվաստանյութ

Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կենտրոնը (CDC) խորհուրդ է տալիս 6 ամսական և ավելի բարձր տարիք ունեցող յուրաքանչյուրին ամեն տարի գրիպի սեզոնին պատվաստվել: **6 ամսականից մինչև 8 տարեկան երեխաների** համար գրիպի մեկ սեզոնի ընթացքում կարող է

պահանջվել 2 դեղաչափ: **Մնացածի** համար գրիպի յուրաքանչյուր սեզոնի ժամանակ պահանջվում է ընդամենը 1 դեղաչափ:

Գրիպի թուլացված, կենդանի պատվաստանյութը (որ կոչվում է LAIV) քթի մեջ փչվող ցողիչ է, որը կարող է տրվել **2-ից 49 տարեկան** ոչ հղի անձանց:

Պատվաստվելուց հետո մոտավորապես 2 շաբաթ է հարկավոր, որպեսզի պաշտպանությունը ձևավորվի:

Գրիպի շատ վիրուսներ կան, և դրանք մշտապես փոփոխվում են: Ամեն տարի գրիպի նոր պատվաստանյութ է ստեղծվում՝ երեք կամ չորս վիրուսից պաշտպանելու համար, որոնք հավանական է, որ հիվանդության պատճառ դառնան գրիպի մոտակա սեզոնին: Նույնիսկ, եթե պատվաստանյութը այնքան էլ չի համապատասխանում այս վիրուսներին, այն կարող է ապահովել որոշակի պաշտպանություն:

Գրիպի պատվաստանյութը **գրիպ չի առաջացնում**:

Գրիպի պատվաստանյութը կարող է ներմուծվել այլ պատվաստանյութերի հետ միաժամանակ:

3 Զրուցեք ձեր բժշկի հետ

Տեղյակ պահեք ձեզ պատվաստանյութ ներմուծող բժշկին, եթե պատվաստանյութ ստացող անձը

- 2 տարեկանից փոքր է կամ 49 տարեկանից մեծ:
- Հղի է:
- Ունեցել է **ալերգիկ ռեակցիա գրիպի նախորդ պատվաստումից հետո** կամ ունի **ծանր, կյանքին սպառնացող ալերգիաներ**:
- 2-ից 17 տարեկան երեխա կամ դեռահաս է, ով **ասպիրին կամ ասպիրին պարունակող դեղամիջոց է ընդունում**:
- **Թուլացած իմունային համակարգ ունի**:
- 2-ից 4 տարեկան երեխա է, ով **ասթմա կամ շնչարգելություն է ունեցել** վերջին 12 ամսվա ընթացքում:



- **Ընդունել է գրիպի հակավիրուսային դեղորայք** վերջին 48 ժամվա ընթացքում:
- **Խնամում է ծանր իմունային անբավարարություն ունեցող անձանց**, ովքեր պաշտպանված միջավայրի կարիք ունեն:
- **5 տարեկան կամ ավելի մեծ է և ասթմա ունի:**
- Ունի այլ **ֆոնային հիվանդություն**, որը կարող է գրիպի լուրջ բարդությունների բարձր վտանգներ պարունակել (օրինակ **թոքերի հիվանդություն, սրտի հիվանդություն, երիկամների հիվանդություն, երիկամների կամ լյարդի խանգարումներ, նյարդային, նյարդամկանային կամ մարսողական խանգարումներ**):
- Ունեցել է **Գիլյան-Բարեի համախտանիշ**՝ գրիպի դեմ նախորդ պատվաստումից հետո 6 շաբաթվա ընթացքում:

Որոշ դեպքերում, ձեր բժիշկը կարող է որոշել հետաձգել գրիպի դեմ պատվաստումը մինչև հաջորդ այցելություն:

Որոշ հիվանդների համար կարող է գրիպի մեկ այլ պատվաստանյութ (գրիպի ապակտիվացված կամ ռեկոմբինատային պատվաստանյութ) ավելի հարմար լինել, քան թուլացված, կենդանի պատվաստանյութը: Թեթև հիվանդություններ, օրինակ՝ մրսածություն ունեցող մարդիկ, կարող են պատվաստվել: Մարդիկ, ովքեր միջին կամ ծանր աստիճանի հիվանդ են, սովորաբար պետք է սպասեն մինչև ապաքինվեն նախքան գրիպի դեմ պատվաստվելը: Ձեր բժիշկը կարող է ձեզ ավելի շատ տեղեկություններ տրամադրել:

4 Պատվաստանյութի ազդեցության վտանգները

- LAIV-ից հետո կարող է առաջանալ քթից հոսք կամ քթի խցանում, շնչարգելություն և գլխացավ:
 - Փսխումը, մկանների ցավը, տենդը, կոկորդի ցավը և հազը այլ հնարավոր կողմնակի ազդեցություններն են:
- Եթե այս խնդիրներն առաջանում են, դրանք սովորաբար սկսվում են ներարկումից հետո և լինում են թույլ ու կարճատև:

Ինչպես ցանկացած դեղորայքի դեպքում, պատվաստանյութի պատճառած ծանր ալերգիկ ռեակցիայի, այլ լուրջ զստացման կամ մահվան շատ չնչին հավանականություն կա:

5 Ի՞նչ անել, եթե կա լուրջ խնդիր:

Ալերգիկ ռեակցիա կարող է առաջանալ, երբ պատվաստված անձը լքի կլինիկան:

Եթե նկատեք ծանր ալերգիկ ռեակցիայի նշաններ (եղնջացան, դեմքի և կոկորդի այտուցվածություն, դժվարաշնչություն, արագ սրտխփոց, գլխապտույտ կամ թուլություն), զանգահարեք **9-1-1**, իսկ տվյալ անձին տարեք ամենամոտ հիվանդանոցը:

Ձեզ մտահոգող այլ նշանների դեպքում զանգահարեք ձեր բժշկին:

Բացասական ռեակցիաների մասին հարկավոր է հաղորդել Պատվաստանյութի բացասական դեպքերի զեկուցման համակարգին (VAERS): Ձեր բժիշկը սովորաբար կներկայացնի այս զեկույցը կամ դուք ինքներդ կարող եք դա անել: Այցելեք VAERS-ի կայքէջ www.vaers.hhs.gov կամ զանգահարեք **1-800-822-7967**. հեռախոսահամարով: *VAERS-ը միայն ռեակցիաների մասին զեկուցելու համար է, իսկ VAERS-ի աշխատակազմը բժշկական խորհուրդներ չի տրամադրում:*

6 Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիր

Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիրը (VICP) դաշնային ծրագիր է, որն ստեղծվել է փոխհատուցելու համար որոշ պատվաստանյութերից վնաս կրած մարդկանց: Այցելեք VICP կայքէջը www.hrsa.gov/vaccinecompensation կամ զանգահարեք **1-800-338-2382** հեռախոսահամարով՝ ծրագրի մասին տեղեկություններ ստանալու և հայց ներկայացնելու համար: Փոխհատուցման հայց ներկայացնելու համար ժամանակային սահմանափակում կա:

7 Ինչպե՞ս կարող եմ լրացուցիչ տեղեկություններ ստանալ:

- Զարգրեք ձեր բժշկին:
- Զանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահական բաժանմունք:
- Դիմեք Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոններ (CDC). - անգահարեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** հեռախոսահամարով կամ - այցելեք CDC-ի կայքէջը www.cdc.gov/flu

Vaccine Information Statement (Interim)
Live Attenuated Influenza Vaccine



Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն:

DCH-1237A

AUTH: P. H. S., Act 42, Sect. 2126.